ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
28 սեպտեմբերի 2021 թվականի N 381-Ա

«ՍԱՌՆԱԿՈՒՆՔԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 111-րդ հոդվածով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. 2021թ. սեպտեմբերի 28-ից լուծել «Սառնակունքի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Անուշավան Վարդանյանի հետ 2016 թվականի դեկտեմբերի 23-ին կնքված N 26 աշխատանքային պայմանագիրը գործողության ժամկետը լրանալու պատճառով:

2.Թամար Համբարձումյանին 2021թ. սեպտեմբերի 28-ից նշանակել «Սառնակունքի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար՝ մինչև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի կողմից զբաղեցնելը:

28.09.2021

X

ՄԵԼԻՔՍԵԹ ՊՈՂՈՍՅԱՆ

Подписано: POGHOSYAN MELIKSET 4108600096

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Մ. ՊՈՂՈՍՅԱՆ**

2021թ. սեպտեմբերի 28
ք. Կապան